ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք, հասցե՝ Կոտայքի մարզ,գյուղ Քաղսի 6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս 077-077-250, էլ. Փոստ qaxsi.kotayk@mail.ru

07.09. 2015թ.

№ 031-162

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Քաղսի համայնքի ղեկավարի հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Ալեքսանյան

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔ

01.07.2014թ.-01.07.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված

աշխատանքների հաշվետվությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՔԱՂՍԻ 2015թ.

2014թվականի երկրոդ կիսամյակում և 2015թվականի առաջին կիսամյակում համայնքի ղեկավարի և գլուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թ. դեկտեմբերի 16-ին համայնքի ավագանին իր N65-ն որոշմամբ ընդունել է 2014թվականի բյուջեն, ըստ որի համայնքի բյուջեի եկամուտները կազմել են 44մլն 651 հազար 900դրամ, իսկ ծախսերը՝ 45մլն 621հազար 700 դրամ: Պակասորդը կազմել է 969հազար 800դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 7մլն 922հազար դրամ: 2014թ. հողի հարկը հավաքագրվել է 6մլն 817 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 86,05 %-ը:

2014թ. գույքային հարկերը հավաքագրվել են 171,4 %-ով, որը բացարձակ թվով կազմել է 3մլն 543 հազար 500 դրամ:

2014թ. դեկտեմբերի 22-ին համայնքի ավագանին իր N70-ն որոշմամբ ընդունել է 2015թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 52մլն 12հազար 400դրամ, ծախսերը՝ 52մլն 185 հազար 100 դրամ:

Հողի հարկը կազմել է 7մլն 922 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 563 հազար 700դրամ, որը կազմում է տարեկան պլանի 7,1 %-ը:

Գույքային հարկերը կազմել են 2մլն 67 հազար 100 դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել են 1 մլն 661 հազար 100 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 80,3%-ը:

- ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 2250.000 դրամի օգնություն:

- ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Քաղսիի միջնակարգ դպրոցի աշակերտներին 2015թվականի ընթացքում տրվել են 40,0 հազար դրամի նվերներ: Համայնքում գործում է պարի խումբ, գործում է գրադարանը, որը տեղակայված է գյուղապետարանի շենքում:

- ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հակողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: 2015թ. տրվել են ծխախոտի 12 և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 13 թույլտվություն, որոնց համար գանձվել է 140,0հազար դրամ՝ համապատասխան տուրքի գումարները:

- ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ներքին Քաղսիի հանդիսությունների սրահի վերանորոգում է կատարվել 2014թ. ընթացքում 5.427.504 դրամի, այժմ սրահը գազաֆիկացված է և գործում է: Այն դարձել է հարմարավետ հանդիսությունների սրահ:

➢ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թվականի ընթացքում կայացել են Քաղսի համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել են 0,07889 հա բնակելի կառուցապատման և 0,978 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե է մուտք եղել 1 մլն 470 հազար դրամ: